

ԱՊՈՏԱՄԵ ԶՈՒ

Կինէր վախտով մէկ թագաւորմ. անուն Զալի Զեռին էր, Կըններ կիշեր ցէրէկ ուր սէյրան գեահներ կըֆոէր, մէրէզ փահ-լէվան էր, Ռօստամու խէրն էր, Մորա երկիրն էլ մէ խատ Փէ-րը փայլեվան կէր, որ շատ քաջ էր, անուն Սալմանէ Մնդի էր.

Զալի Զեռինի ախ ըսկում շատ էր, որ էսի հախու փախաւ կնաց երկրից, էլաւ տիւս. տիւ մասէ որ էկաւ Զալի Զեռու խողի մէջ պախկաւ. մնաց Զալէ Զեռին, Ռօստամի խէրը, կնաց Փէ, ոստա-սաւ դաւարմ (արահետ) մէջ ուր խողին կնացեր էր, գետին ճը-դէր էր:

Կնաց տեսաւ զօռպա մարդմ նստեր էր ծորիմ մէջ, քեառ-սուն խառ վէրու ոչխար պռներ էր, ոտքեր կապեր էր, շարեր էր շիշ՝ պռներ էր վէր կրակին, կեախում դիրմ ձեռ կուտէր ճուռ կը փոթուցէր, խում խում կուտէր: Առեց ջաղցի քեարմ կլորեց, կնաց, էսիկ ձեռ իտու ինե ջաղցի քեար, էսա կողէն ընցաւ, կը-նաց չխ չիրիշկաց յետև էնա մարդ որ ձէն չի տւաւ: Էլաւ մէ-կէլ կլորեց, նորէն ձէն չիտայ: Էլաւ մէկէլ կլորեց, տօ ասաց՝ եաման, իմ գեապաներ վըր ձի իտարամեց: Էլաւ պռնեց իողե ուր մուրսից մաղ քաշեց կապեց, իտի էնտեղ: Էլ ձէն չտւաւ, չիւմ ուր գեապաներ կէրաւ, պեղերը սրպեց, նստաւ էնտեղ:

Ասաց.—Տիւ մվ ես:

Ասաց.—Ես Զալէ Զեռին եմ:

Այ, ասաց՝ Աստուած քեռ տուն աւիրէր, ես քեռ հախուն եմ փախի, իկե, էսմ էր քեռ ոժը, դէ արի այդ (խոստում) արմ որ քեռ լաճ Ռօստամ օրօխկես գեա իմ կոփւ, քե պան չասեմ:

Ասաց.—Այդ ընի վըր ձի, ես եօթ օրից իտև իմ լաճ Ռօս-տամ օրօխկեմ գեա խքե կոփւ:

Տօրսվան Սալմանէ Մնդին իթող կնաց ուր երկիր: Զալէ Զեռին էկաւ մտաւ ուր հօտէն, ինկեաւ վըր քիյթ մոթին, իլաց: Զալէ Զեռին իրեյք խարիր խատ Փէրըզ փայլէվան նաւըզ-նաւազարի կէր. իրեյք խարիր վաթսուն կօդարցի: Դօրսւան Զա-լէ Զեռին կնաց տուն, ինկաւ վըր քիյթ մոթին իլաց. ինոր միս կը խալէր, ոսկոոը կը մաշէր: Տօրսւան Զալէ Զեռի կնիկը էլաւ կնաց մօտ Փէրըզ փայլէվան, ասաց. Աստուած՝ ձեր տուն աւիրի,

Նաւզարիք, գեռուանիք. ձեր տէրը էսա եօթ որ ի ջան դարափ իլի
կըխալի կըմաշի, նա կուզէյք, նա կը խարցնէք:

Ասին. Աստուած ձեր տուն աւիրի, մենք Բնչ կիտինյք, էսա
եօթ որ ի նա կըգեա դիւան, նա մենյք կիտնանյք:

Կնացին նստան դիւան, կանչեցին դիւան Զալէ Զէռուն ա-
սացին. Աստուած քեռ խիմը չըքհակի, նա կըգեաս, նա քեռ դարդ
մե կասես:

Ասաց. Իմ դարդ մը խառցուցէք:

Ասին. Հլա քեռ դարդ Բնչ ի մե ասա:

Ասաց. Մէ իրիշկացէք խենյք իմ լաճ էղա սեղ չի:

Դօրսվան ինչ Ռոստամ ինչ լաւ որ ասաց՝ իմ լաճը էս տար-
պար չի, փախաւ մտաւ ձիանքտերաց յիսուս Աչքիցին, ասին՝ չէ:
Ասաց. Ի՞նչ կըխառցուցէյք, ես էլս կնացի էս սէյրանգեաներ
կան-գեալ, տէսա մէյ խատ մարդ, վերու ողջներ սաղ սաղ պըռ-
ներ էր, արեր էր վըր կրակին, սաղ-սաղ ճռներ կըփոթցնէր կու-
տէր. մազաթըթախ ձի պոնեց, մէկ մազով կապեց, իսի էնտեղ
չում ուր միս կէրաւ պռծաւ, ասաց՝ տիւ վմլ ես. ասի՞ ես Զալէ
Զեռին եմ. ասաց՝ հա, Աստուած քեռ տուն աւիրէր, ես քեռ հա-
խուն եմ փախի իկե ըստեղ էսա ի քեռ ոժը: Թեյ տ'սպանեմ, ա-
լա քեյ կուրպան կանեմ Ռոստամուն. քեյ կըթոնեմ ալա արի այդ
արա որ Ռոստամ խրկես իմ կոփւ: Դօրու ես իմ ճիժ ինչին տո-
րոփկեմ ինոր կոփւ:

Համան Ռոստամ թռաւ տիւս, ասաց. Հայ պապօ, տիւ իսմը
խամարն ի մառախ կանես, ես առաւտուն կէրթամ ինոր կոփւ,
Աստծով ինոր ջան ջայնըմին թասլիմ կանեմ:

Ասաց. Իլի իմ պատրաստութին տիսի, քեռ ձին էլ նախշէ
պալաք տիւ տու ձի, ես կէրթամ կոփւ:

Դօրսվան առաւտուն էլան ինոր թադարուք արին, քեառ-
սուն կօն (վրան) պերին արին ինոր շապիկ, քեառսուն թօնպան,
քշեց, եահու եալլա արաց կնաց Սալմանէ Մնդու երկիր:

Շատ քիչ Աստուած կիտի, կնաց ինոնց խորզա (քեռորդի)
Պէժանկ կէր, կնացեր էր ցախէ, էկաւ տէսաւ մէ սև զտարմ գիօ
մըջ երկինյք մըջ գէյտիյնք կուգայ. համան փախաւ, մտաւ մէջ
հառւին, իրաշկաց որ ուր քեյոին ի: Ասաց. Տօ քեռի, ես հախու
կտըա, ասի զաի տիւ կիշիրուա գէյջ էր. էտա Բնչ սև զատ ես խագե,
գեմը կըհաս, գեմը կըգեաս:

Ասաց. Ուլա, Պէժանկ, կէրթամ Սալմանէ Մնդու կոփւ:

Ասաց. Տնաշէն, չխօ Զառէ Զէռինի երկիր քեամպախ էր,
մարդու չկէր տնէն խքեյ, ջիւր պան տէր քեյ:

Ասաց. Գեօ չկէր: Որ սկուն ի՞ կայնի իմ շամկ թալեմ տուն,
շուտ գեամ: Ալա իմ խօր ասա, ասաց Ռոստամ, նախշէ պալաք
գեօ վըր մսրին, ինչ գեախ կը կատղոտի՝ գեամ զանի պէրան թող-
նի թօ գեա:

Պէժանկ շլակ իթալ տուն, վաղեց էկաւ ուր քեյռուն խասաւ,
նալլա ես հայդէ արին, քշեցին կնացին: Աֆանդըմ, կնացին մը-
պէպան (ամայի) դաշտիմ խասան, նա ջուր կէր, նա կանաչու-
թեն, ասաց. Պէժանկ, քեյռին մեռնի քեյ, ծարաւ մեռանյը, կնա,
մէ կան արի պալաքի պուտմ ջուր կնդնես, խմենյը: Թուաւ էսդեխ,
թուաւ էնդեխ, էլաւ սարի դյօխ, տեսաւ սարի յետե մէկ ակ
ջուր կըթալի չանձ Շամիրաման ակ. կանչեց ասաց. Պէսի, արի
ջուր խմիր: Ռոստամ ասաց. Կուշտ խմիր, որ ես էկա, էլ պուդմ
ջուր չըմ թողնի քեյ: Պէժանկ կուշտ խմաւ, քեաշվաւ դէն:

Դօրուս Ռոստամ էկաւ, պառկաւ, պէրան իսի վէր ական,
ծծեց չում աւճներ, քաշեց պէրան. դէ, ասաց՝ քեռի՝ պառկենյը
չում պուտմ էլ ջուր գեա խմենք էրթանք: Մամասե, էսա հախ-
պուր քեառուն դէվու ախառուրն էր, իրիկուն ճոճ գէվը փառչերն
իտու պստիկ աղքօր ձեռ, ասաց. Կնա, պուտմ ջուր պե խմենյը:
Էկաւ պստիկ ախալէրը, էկաւ, տեսաւ որ մէ զօռպա ուկ
զատմ, մէկ պստիկմ էլ գեօ պառկած էնտեղ: Փախաւ, կնաց պատ-
մեց ուր ընկերներաց: Ասին. Տօ, դէ տու վախկուկ, լպղորակմ
տիխնաս, շոտ տուն կփախնես: Էն մէկէլ դէվն էկաւ, էն էլ սկունց
էն մէկէն էլ էկաւ, էլմէլ փախաւ: Էն մէկէլ էլ էկաւ, էն էլ փա-
խաւ: Դօրիս զրմէն դէվերը մէկտեղ էկան. թափան վրէյտերը:
Ինչ Պէժանէն էր, քշեցին տարան: Ինչ Ռոստամն էր, չխօ քյներ-
էր, կըզանէն չէն զանէ, չըր ակիսե: Դօրավան ինչիս ակիսաւ, դըր-
պըմ ինոր, մէկ ինոր, դօրուս պոնեց էսսունն էլ: մէկ տրուց ա-
րաց, մէկ ծիեց պատ, էլան չիր. ինքյն էլմ էլ պառկաւ քյնաւը
Մէկէլ էն ակիսաւ. որխկուրեկոց կուգեա, իրիշկաց, տեսաւ գեօ-
նօթն խոզիյ էլ թափած վըր Պէժանին: Մէ տիր կանչեց ասաց.
Պէժանկ, տու գեա վըր քեյռուն, տու գեա վըր քեյռուն: Էն եօթն
էլ պանեց, ծեփեց պատ:

Ասաց. Դէ կնացէյք ձե խամար Սասուն քաղայք թահնա-
(հանգիստ) պառկէյք բյնէք:

Էլան, շատ քիչ Աստուած կիտի, կնացին էլան վէր սարիմ
գլխուն, տեսան մէ խատ քեաղքիյ մէջ մարդեր ժողուան, էլմէլ
կնացին ինոնց տների:

Իրեյք տիր ժողվան, իրեյք տիր ցրվան: Ասաց. Քեռի, էսա
ինչ բան ի. ըստեղ ասաց՝ պանմ կայ:

Ապա ես կիտեմ, տիւ թեվիթը մարդ ես, մէ կնա խառցու արեւ:

Կնաց մէ խատ նախրորդ տեսաւ, ասաց. Էսա ինչ բաս ի, էսա ինչ քեաղայք ի:

Նախրորդն ասաց. Տօ. քյաքոտա ոռ, քնո գավին ինչ ի, տիւն դառվիշ մես խըտ քետ հալին: Միկմ ի զմրկ վիզը քէթրովաւ: Դէ ասա չիօ քեյ կապանեմ: Ասաց. Վախ, կասեմ: իմ վիզը շիտ-կիր, սիկմ իզար էն մէկէլ երես շիտկւաւ:

Ասաց. Էսա քեաղայք, կազան շահարին է: — Դրուտա ասա, ապա էսա ինչի բակնէմ ժողվան ժողվան պլավան (ցըուան):

Ասաց. Մեր թագաւորու աղջիկը դէվը փախցուցե, կանեն որ էրթան հետեն, չըն գըխշնայ:

Էլաւ կնաց մօտ Ռոստամ, ասաց. Ռոստամ, էսա թագաւորու աղջիկը դէվը փախցուցէ, տարե, կանեն որ էրթան հետեն չըն գըխշնայ:

Ռոստամ ասաց. Ո՞յ, սկուն ըլնի որ էստեղ ինչ Զապ-լա տնէն մարդ ըլնի, մըր վրէվին ի եսիր (գերի) տանին: Տօ Պէ-ժանկ, մեյնք կարիպ դառվիշ ենք, մըր պէտք ինչ ի խետ իւղի պանին: կնա, ասաց՝ խառցու, խենյք էն դէվու տեղ որ տեղն ի: Նախրորդ ասաց. Գեօխան էնա հէրի մէջ:

Կնացին խասան վըր հէրի դռան, Ռոստամ ասաց. Տօ Պէ-ժանկ, դէ արի մտի ներս, ես չըմ կանա, տիւ ինչ կանես, արաւ Մտի ներս:

Պէժանկ ասաց. Տօ քեյոի, էնտեղ որ ես ըլնեմ, տիւ ինչ պան տը անես: Մտաւ ներս, տիսաւ դէվը նստե քեառառն չաղցի քեար արե ուր թղղեիս, աղջիկն էլ պանէ վէր մէյ ձեռաց, մէյ կըխօտուա, մէյ չախցի քեար կըթալի:

Ինչ դէվու աշքն ինկեաւ Պէժանկ, մէկ չաղցի քեար էթալ Պէժանկ փախաւ, ուր իդու մէյ կողմ, չաղցի քեար կլորւաւ, էկաւ տիւս: Խէվ ասաց՝ «Ինսան է ըժխալիե դիսան պա խալի», (մար-գը խողից ի ստեղծուած, էլի դարձիր խող):

Թօզ քեաշւաւ, Պէժանկ էլաւ տիւս, ասաց, էյ, դէմը մեռա. Ես իկեր եմ դեխ քետ խողիյն: Դէվը չախցի քեարմ էլ էխան իւ թաւ էլմէլ թօզ էլաւ վրէն ասաց. Ռոստամին, խող ես, խող զար-ձիր: Դիրմ էլ թռաւ տիւս, ասաց. էյ դէմը խող դառնամ, ես իւ կեր եմ դըխ քետ խողիյն:

Թլա դէվին էր, աղջիկն էթալ գերդին, խասաւ դեխ ինեւ էր-կուսը խառվան իրար, կոտւելով էկան, խասան չիւմ տիւս: Դիրմ ինչ դէվը նաֆաս էխան, Պէժանկ թռաւ էկաւ ջիւմ տիւս: Ռոս-տամ էսաւ, Պէժան, ինչ ի կը փախես: Պէժանկ ասաց. Տօ մւր կը փախեմ, էն խէրաքիւնի պէհմն ի (շունչ) որ ձի կըթռուցե:

Ռոստամ ասաց. Պէժանկ, թող գեա վըր քեռուն, տիւ կնա:

Խետ դէվու աչք ընկեաւ Ռոսդամ, Ռոսդամ էրկու մատ էթալ դէվու վիզ, քեաշեց տիւս: Պէժանկ մատաւ աղչիկ էխան տիւս Դօրիս տուին նախորչուն, ասին կնա ասա ես կնացի, դէվուն սպանեցի, որ չըն աւտա, առ էսա էրկու ակնջներ, շանց տուր. ասա անուն Աստծուն արի, զարկի դէվուն սպանեցի, առեցի էկա, թագավուրըն աղչիկ կտա քեյ, Աղչկան էլ ասաց. Տիւ թէ սուտ ասիր՝ կըդյանք քեյ էլ կսպանենք:

Նախորդ աղչիկն առաւ կնաց թագաւուրու մօտ. թագաւոր մարդ օղօրկեց, աղորթ որ դէվու սպանած ին. ականջները նախորդ կտրե, պիրե:

Դօրու էկան, թագաւորուն ասիցին, թագաւորն ասաց՝ տղա, ինչ աղչիկնի քեյ, արի կնա, երկեր կուզես, քեաղայք կուզես տամ քեյ:

Իպե աղչիկ պսակեց վէր էտա նախորդին. քեառսուն օր, կիշեր ցէրէկ խառնիս արաց:

Մենյը գեօր էրթանյք վըր Ռոսդամուն: Ռոսդամն ասաց. Պէժանկ, կնա թագաւուրու մօտ Կազան շահար, ասա՝ մենյք էրկու դառվէշ ենք իկե տեղ, մե տեղմ տառտկէյք, մենյք գեանք էրկու, իրեյք օր նստենյք, էրթանյք:

Պէժանկ էլաւ, կնաց Կազան շահարի թագաւուրու մօտ, ասաց. Թագաւոր ապրած էկնաս. մէկ տեղ տուէյք ես իմ ընկեյր գեանք նստենյք, մեր քիյսայից ուտենյք խմենյք, էրթանյք: Թագաւորն ասաց. Իմ հօդէն գեօհան, էկէյք նստէյք, իմ քիյսայից կերէյք, խմէյք, կնացէյք:

Պէժանկ ասաց. Հօդէն մե տեղ չնէ, մե չանց Սղէրդու խան տարտկէյք, ես իմ ընկեյր նստենյք ինե. մեր քիյսուց կուտենյք, չիւմ էրթանյք:

Տառտկէցին, Պէժանկ էլաւ, կնաց Ռոստամին ասաց՝ իրե. որ Ռոստամ իրե, զարգյխից չմտաւ ներս, զարգյխի շէմք, շլփանէն քեակեց, առեց կնաց ներս: Թային (թոշակ) արին, օրական քեառսուն դավա (ուլտ) ինոր խաց կրտէն. օրական քեառսուն դավի աղփ կըկրտէն տիւս: Ինչ Պէժանկն էր, կէրթէր թագաւորու դիւան հէվարէ հէվարին (երեկոյից երեկոյ) ինչ լոէր, ինչ տիւնէր, կըկէյր Ռոստամին կըպատմէր:

Թէ տարիմ, թէ էրկու տարի մնացին էտա տեղ, դօրսվան օրմ, Պէժանկն կնաց դիւան, տեսաւ որ Սալմանէ Սնդիի մարգեր էկած են էտա թագաւորուց վէրգի (հարկ) կուզին:

Մնաց չիւմ յիրիկուն, իրե ուր քեյսուն, Ռոստամին ասաց ու պատմեց: Ասաց էն մարդ որ մենյք տի էրթենյք ինոր խետ կախ, ինոր վէրկի ժողվողներ էկած են փարա կուզեն:

Ռուսկամ առաց՝ Պէժանկ կայիմ կաց, ինոնց մարդերաց լեռուն քեաշի, զարկ ճակատ թօղ էրթան: Դօր մնաց Ռուսկամուն:

Դօրիս առաւտուն ինչ ինոնյը տըհէն խոկինչն (գանձարան) որ փարա տը չափէն: Էլաւ կնաց խետքեյր: Էնդեախ ինչ ոսկին լցին չափ, ասաց՝ չէ, էղա չէլաւ: Թողէք ես չափեմ: Առեց չափ կործեց, փէտ իտու վրէն, իբը ոըւ ոսկին շուռ իտի գէյտին:

Տօ, ասին, էսա քեաքեռտառու ինչ կուզի: Համան խասաւ, լեղուր քաշեց ի զար ճակատ, ասաց. Կնացէյր ձեր Սալմանէ Սընդուն պարկ արէյը:

Էլան կնացին: Քեաղայք քեաղքյով ասին՝ հյ. էսա գառվիշն մեր մեր տուն աւերեցին, մեր իսկեցին կրակ: Էլան մտան ինոնց տներ. քեարեր լցին դռների յիտն, պախկվան էլ չէլան տիւս Սալմանէ Մնդու հախուն:

Ինչ Սալմանէ Մնդին էր ուր տեղը նստած իրիշկում էր դէս դէն: Ինոր միլէթն էլ զօլրինդ (հեռաղիտակ) դրած աչքերին կըսին, օխ, օխ, Սալմանէ Մնդու մարդեր պիօ էկան ծծղկտալէն: Քիչ էլ էկան: իրիշկաց ասաց՝ տո ի՞նչ ծծղալ. պէրներ պաց՝ լեղվըներ քաշած, զարկած ճակատ էկան:

Էկան խասան Սալմանէ Մնդու դուռ. Սալմանէ Մնդին ասաց՝ տօ՝ էղա լինչ իլե, ասին, գառվէներու արածն ի էլաւ կանչեց ուր գառվէներ, ասաց՝ լինչ անենյը, ասին՝ լինչ տը անենյը մենյը, վըր մեր չենյը առնի ինոր խետ կոփւ անի: Թող նախրորդ էրթայ սրպի գեա: Նախրորդն էր տիրմ էլաւ կնաց կազան շահար, խասաւ վըր փուղցին, կոսօնամ (փայտ) իզար, թօզ, դուման իտու վըր քեաղաքին, ասաց՝ էսա քեանառուն տարի նախրորդ եմ, մէկմ եմ կով չկիրե, էսօր եկեր եմ էսա քաղայք տը կտրեմ:

Դօրիս հեվարին, էկան թագավորուու դիւան, ասին. հէյվախ Սալմանէ Մնդու նախրորդ իկեր ի մեր քեաղայք տը կտրի:

Պէժանկ կնաց յիրիկուն Ռուսկամին ասաց՝ էսօր Սալմանէ Մնդինի նախրորդ իկեր ի սկնա կասի, տիւ լինչ կասես: Ես ինչ որ կասեմ առաւտուն կասեմ: Կնիմ էկրթամ ինոր ջան ջայնամուն թամլիմ կանեմ գեամ: Ասաց չէ, քեանի ես իդա եմ չէ, ինչ գեաի որ ես մեռա, նոր տիւ ինչ կանես արա:

Էլաւ առաւտուն կնաց, չիւմ կէսօրին իզար զարկւաւ, կէսօրին ինոր վիզ կտրեց իթող իրե: Մարդեր էլան կնացին մօտ թագաւոր, ասին՝ ոլա թագաւոր, էնա պատիկ գառվէշ նախրորդ ըսպանեց, ալա ջոջ զարվէշ մեր ոժմ չկտրեց: մեր ըղաեր ինոր խաց կրելով, քեաք թալելով մեռանյը:

Դօրիս Պէժանկ իրե մօտ Ռոսդամ. Ռոսդամ ասաց՝ Պէժանկ, Բնչ արիր. ասաց. ինչ արի, նախրորդի վիզը կտրեցի թալի էկա. ասաց՝ էտա թողնենք:

Դօրիս էն իրիկուն էլաւ կնաց գիւան. թագաւոր ասաց. Դաւրէշ՝ տիւն ապրես. ալա ջոջ դաւրէշ, մե ոժմ չկտրեց. մեր դավիչք մեռան ինոր թային կրելով, քեաք թալելով. Ասաց՝ Աստծու սիրուն ձէն մըածէք, որ չլսա, էլ նա ես կանամ ինոր ջուղապ տամ նա տիւք, սուս. Մէկ էլ որ խօվիւ էլմ իրե, կայսաւ վըր դարին ասաց՝ էյ էսա քեառսուն տարի ես Սալմանէ Մնդու խօվիւն եմ, գէյլմ եմ ոչխար չկիրե, իկեր եմ ձեր քեաղայք աը կտրեմ:

Իրիկուն էլմ էլ Պէժանկ իրե ասաց. քեյոփ, էսօր էլ խօվիւ իկէ վըր մե կոկու. Ասաց առաւտուն կէնսեմ կրհամ, ինոր ջան սատանին թասլիմ կանսեմ կուգեամ. Պէժանկ ասաց՝ չէ, չիւմ ես չը մեռնիմ, տիւ քեռ տեղէն հիրար չըս առնի:

Առաւտուն Պէժանկ էլաւ կնաց գեն հինե, չիւմ կէսօրին, անուն Աստծուն արաց, ինոր վիզը կտրեց իպեւ. Դօրիս քեաղքի միլաթ գեխ գեխա (ամեն կողմից) կանչեցին ասին, պստիկ դառվէշ տիւ ապրես, ոլա տիւ ըաշն ես, ալա էն ջոջ չէ. Մեր ըղտեր թային կրելով խատան:

Ասաց՝ Աստծու սիրուն էլնի, սուս կացէյք, որ լսաւ, ձե էլ ձի էլ կոպանի: Էն մէկէլ որ առաւտուն Սալմանէ Մնդու վազիր իրե, անուն Թիլու Թանդի էք. իրե կեանչեց քեաղքիյ վլէն ասաց՝ հէյ ես Թիլու Թանդի Մնդին եմ, իրեյք խարիր վաթսուն վեց ֆէլ ու ֆէնդ ունիմ. իկեր եմ էսա քեաղայք աը կտրեմ, էրթամ:

Իրիկուն էսա քեաղայք քեաղքյով ժողվան էկան, ասին թագաւոր, էսօր Թիլու Թանդի Մնդին իկե, մեր ջանը ջայնըմին թասլիմ կանի:

Դօրու թագաւոր կանչեց պստի դառվիշին, ասաց՝ դառվէշ, Բնչ թատպիր անես: Առաւտուն մենյը կէրթանք, տիւ մառախ (մտածմունք) մը անէյք, Աստուած օզօրմած ի: Կնաց իրիկուն ու Ռոստամին պատմեց: Ինչիս աը էլնի, էսօր Թիլու Թանդի Մնդինի իկի. ինչ անենյք: Ռոսդամ ասաց՝ առաւտուն կէրթամ ինոր ջանը ջայնամ թասլիմ կանսեմ:

Չէ, ասաց՝ քեանի ես սաղ եմ տիւ չըս էրթայ: Առաւտուն Պէժանկ էլաւ, կնաց չիւր կէսօրին կռուան. կէսօրին Թանդօն Պէժանկին պռնեց տարաւ, էնիկ հար առեց կնաց, կաղան շահարի միլաթ լացին, պռոացին փախան էկան, ասին՝ հայ, Աստուած քեռ տուն քեակի, ջոջ դառվէշ, տիւ խէրիք չի՞ պառկես,

մեր ձիանք մեռան քեյ թային կըելով, իլե վեր. Պէժանկ պոնեցին տարան,

Մէկ տիր ինչ որ տեղէն նռաց՝ էլաւ վեր, տանիս մանիս, կոչ կշտանոց զմէն խըտ մէկ մէկու էլան, քեակէց էլաւ տիւս:

Տիրմ էլաւ կնաց տարգյխի տուռ. չախմախմ էզար, նախշէ բալաքի պոչի մազ իտու կրակ. նախշէ բալայք Զապլա երկիր վըր մարին կատղոտաւ Զալէ Զէոփին ասաց՝ իմ լաճ նկղ տեղ ի, իսկէյք վրէն ինոր գիւրզ ինոր նետ, թողէք թօ էրթա:

Տիրմ կապեցին վրէն, զեամ զարկին պէրան, թողին կնաց: Դէլ ալա, Ռախշէ բալայք իրեյք օրուա ճամբախ զատն էր, Ռոսդամ ինոր ոտաց գըմփոզմփոց լսաւ Խասաւ գյլօխ պազեց, թըռաւ քեամակ. շատ քիչ Աստուած կիտի, կնաց Սալմանէ Մնդու քեազայք խասաւ:

Տիրմ էն ու Սալմանէ Մնդին էլան կոփւ. չիւմ իրիկուն կը դմնէն կը զարկուէն, տիրմ իրիկուն կը քեաշուին: Ինչ Սալմանէ Մնդին էր՝ կըրթէր տուն, ինոր խետ զարմանէ (դեղ) սէմմանի կէր, կըտանէր կըցանէր մըջ, առաջկալութէն կըմտնէր մէջ ինոր բրնժտեր (վէրք) կըքեավէր: Ինչ Ռոսդամ էր, անօթի ծարաւ կը մնէր առջև էղա ցրտուն պընտու, ինոր բրնժտէր (վէրքեր) թաշանայ տուէր էն կըթափէն տակ էղա տեղ վախտով մէկ աղջիկ էն պիրէ Ռոսդամի խօր քեազէն, ամա (բայց) պառվրցեր էր: Դօրիս ինչ մթնաւ սլէմ գարէ խաց իլից իպէ Ռոսդամին: Ամա, սլէմ խաց, ինչ գեղ զարման էր ինոր ակոփ տակ չէր պանի: Ինչ խաց կէրաւ, ասաց՝ ախ Ռոսդամ, քեռ խօր աչքեյք քեօնէր քեյ չորօնկէր էստեղ էսա զալըմի խետ կոփւ Ռոսդամ ասաց՝ Էյ պառաւ, էրկու գեարէ խաց պերիր ձի հէրես կտաս: Զէ, ասաց, ալա իմ դըժմը կըզեայ:

Մնաց Ռոսդամ չիւմ առաւտուն, մէկէլ Սալմանէ Մնդիկ էկաւ կոփւ. էլ մէլ իրիկուն Սալմանէ Մնդին էթօղ կնաց ինոր տուն: Դարմանէ սլէմմանին տարաւ էթալ մէջ առաջկալութեն. մտաւ մէջ, խօրօս ինոր բրնժդեր (վէրքեր) ժրաւ, էկաւ մտաւ տեղջիլ (անկողին) մէջ ուրիաթ քյնաւ:

Խեղճ Ռոսդամ մնաց տիւս, մէկդնի գյլօխ ցրտու առջև, երբ մթնաւ տիրմ էլ պառաւ սլէմ գեարէ խաց առեց էկաւ էնտեղ: Ռոսդամ կէրաւ խլսաւ, տիրմ էլ պառաւու աչք ընգեաւ Ռոսդամի բրնժդեր. ասաց՝ մխ, Ռոսդամ, քեռ խօր աչքեր քեօնէր քէյ չօրոխկէր կոփւ:

Ասաց՝ պառաւ, կտորմ գեարէ խաց պերիր, կէրայ, վըր ձի մունմթ կուգեաս: Զէ, ասաց՝ Ռոսդամ, իմ գժար կըզեայ:

Ասաց. Վըր քե ինչ թատպիր տ'անեմ. էնիկ իրիկուն կէր-

թայ դարմանէ ոլէմանին կըթալի առաջկալութեն, գիշէր նոր կերթա կըմտնի ինեւ Կանաս գիշեր էրթաս մտնես ինոր պախչէն, մտնես ինեւ Խա ասաց Ռոսդամ. տիւ ձիկ ճամբախմ շանց տուր, Պառաւը ասաց՝ Էյ դուռ չկայ, պատնից կանցնիս ներս էյ, ասաց՝ թէ որ էնիկ էկաւ, ձե չուռտ մըջ աւաղին տէսաւ, ձե չ'սպանէ;—Զէ, ասաց՝ էղա բէրախտութեն կնի ինոր խամար, Ռոսդամն էր, Ռախչէ բալայք խէծաւ կնաց, Իրիկուն մութն էր, կնաց բաղնի կուշտ (մօտ). տիրմ զանգին իզար Ռախչէ բալաքին, ընցաւ, կնաց բաղնի էնդեխաց կողէն:

Ռախչէ բալայք շիտկեց մէջ բաղչին. ինքյ մտաւ մըջ աւաղին, ինոր բընքտեր (վէրքեր) սկուն շապրվան (առողջացան) սկուն ինչ զե նոր ինոր խօր երկրից իրե, սկի կռիւ չ'արե Ռոստամ դէլ ալա մըջ աւաղին էր. Սալմանէ Սնդին մէտակ շապիկ Փանար պաներ էր ձեռ, իրե որ մտնէր մըջ աւաղին, իրիշկաց որ Ռոսդամ կեօմշու պէս մըջ աւաղին լող կանի. ասաց. Էյ վախ. դառցաւ էկաւ ուր տուն ասաց՝ կնիկ, իմ քեաղայք խային մարդ կայ, իմ առաջկալութեն ինոր շանց ի տուած, էսօր գօմշի ոժ իկե վրէն. վաղ իմ ջան ջայնըմին թասլիմ կանի:

Հէտիկ Ռոսդամն էր ընցաւ բաղնից, զանգիւմ էթալ, կը-նաց մէյդնի զյլօխ կայնաւ:

—Ռոստամ քեռ դմրդ, մառախ (մտածմունք) ի՞նչ էր. միս կասէր՝ ես մէյ խատ Պէժանկ սաղ սալամ տեսնամ, նոր մեռնեմ:

Սալմանէ Սնդին էլ ինչ արաց. ինչ Պէժանկ պանեցին, տը-ւէր էր ուր աղջկան, ասեր էր տար սպանի, էն չըր սպանի, եր շախէր կը թօնէր վէր ուր:

Թօրուս Սալմանէ Սնդին ասաց՝ էն լէշ որ տեղն ես պախե, բեր պատից կախի, պալքիմ ինոր ոժը պակսի: Թօրուսն պառ-կաւ քյնաւ չիւմ առաւտուն էլան մէյդան. Սալմանէ Սնդին ասաց՝ Ռոսդամ՝ իրիշկայ իմ քեօշկ ու սարէն (պալատ) իմ պաղ-պախ-չէն, խօրօս թամաշա արա, որ քեյ տը սպանեմ: Ինոր մեղք ինչ ի, որ ի՞նչ ի Ռոսդամի աչք ինի Պէժանի լէշ՝ կուդումը (ծնկներ) կոտրի:

Ռոսդամ իրիշկաց ինոր դմր բար, թամաշա արաց, տեսաւ Պէժանկ նստե ինոր աղջկայ վիզը զյրկե, հման կը պաքիյ: Թեառառուն գօմշու ողջանց էլ իրէ վրէն. ասաց՝ Սալմանէ Սնդի, մէ խատ էլ տիւ իրիշկայ, քեռ դարրար թամաշա արա, չընի ասես, Ռոսդամ ձի սպանեց, չէթօլ իմ դմր-բար խօրօսմ թամաշա էնի նոր մեռնի:

Ինչ իրիշկաց, տէսաւ որ ինոր աղջկը ձեռ թալի Պէժանկի վիզը, համա կը պաքիյ. ասաց՝ հէյ վախ, չիւմ իմ տնականն էլ

խղի խային ի (նենդ), էլ իմ մնալը ի՞նչ ի վէր աշխարին:

Թեառուուն գեոմշու ոժը մօտէն պակսաւ. Ռօսդամ ասաց՝ Սալմանէ Մնդի, դէ զար քեռ իրեյք գըրպատ իրեյք տիր Սալմանէ Մնդին ի զար Ռօստամուն, Ռախչէ պալայք ըսկուն խաղաց խըտ ամպերաց, որ մէկ դրա չառեց էնոր:

Դօրուս ասաց՝ դէ Սալմանէ Մնդի ծօր (հերթ) իրե ձի: Մէջ տիր Ռօսդամ կնաց, իրի Ռօստամ թուրմ էթալ վիզը կտրեց, ինոր գյլօխ էլաւ խըտ էրկուուց. Մէտիր պառաւ որ անթրոցմ առեր էր, կայնէր էր մէյդնի գյլօխ, մէկ անթրոց էզմար վըր Ռախչէ պալաքիյ պոչին. մէյտիր էրկու օրուայ ճամբախ փախսաւ. տիրմ էլ Ռօսդամ էնզուց գտացաւ իրե, ասաց՝ հմ պառաւ գտի էրկու գեարէ խաց, տուեր էր իմ պէնին տպէր տակ. դէ ասաց՝ Ռօսդամ, ձէն միսանի, արի իրիշկայ ինոր գլխու տեղ, տե՛ք քեանի մի փուր քէյտին, ինոր գյլօխ չէ հերէր (չէր գնար); որ քէյտիպէր՝ կսպաննէր:

Կնաց փորեց վաթսուն գեազ գեյտին, ժօրօվ (հազիւ) ի խան տիւս, առեց կնաց Սալմանէ Մնդու քեօշկ, մնաց մօտ Պէժանկ: Առեց Պէժանկ Սալմանէ Մնդու աղջիկը իրե: Էղա Սալմանէ Մնդու քեաղիյ միլլաթ ժողվեց, առեց կնաց կազան շահար ինչ իննյք խաց կուտէն:

Ասաց՝ դէխովլտնա (այսուհետև) տիւք բիթուն, էսա կազան շահարի քեաղիյ թագաւորի հպատակն էք, էլ ձե հուրիշ թագաւոր չկայ: Իպէ ինոնք բիթուն արաց ինոր հպատակ. կանչեց թագաւոր իպէ, ասաց՝ թագաւոր, մենյք ի՞նչ ենք կիրե, ի՞նչ ենք իմե, հէսապ արէյք, մենյք տանյք, էրթանյք:

Թագաւոր ասաց՝ մենյք ձեզնից շատ շնորհակալ ենք, մենյք պան չենք ուզի ձեզնից, աղէկութեն ինչ տիւք մե արէյք, դէլ (տակաւին) մենյք պմն առնենյք քեյնէ (քեղանից): Իպէ ուր պստիկ աղջիկն էլ իտու Ռօսդամին:

Ռօսդամը ինոր աղջիկ, Պէժանկ ուր կնիկ, էլան եահու եալ-լահ քշեցին, կնացին էրկու ամսվա ճամպախ, խասան ինոնց քեաղայք:

Դօրսվան կանչեցին ինոնց ինչ կանդար ֆէրըզ փայլեվան կէր, կանչեցին նաղարէյք, կօդարչէք զմէն առին պիրին, եղա գյլօխ ինչ կտրեր էր, իտի մըջ դիմկին (ատեան) ասաց՝ պապօ (հայրիկ) էսա գյլիսուց էր, ինչ տիւ ըսկում կը վախենէր. դէ առա քեյ էն գյլօխ: Խէրը իրաշչաց որ Ռօսդամ շնւտ առաւ տը պլաւէր (ցրուէր), ասաց՝ կնացէյք հօդի (սենեակի) դուռը պացէյք, գյլօխմ կայ պիրէյք ձի: Կնացին էն գյլօխ պիրին. էն գյլօխ ինչ

Ռոսդամ պիրիր էր, գրին մըջ ինոր աչիչ, դէլ հալա հլին (լեցուն) շարաց:

Ասաց՝ Պապօ, խէր ա: Ասաց՝ ես սկնայ մարդերն եմ սպանե:
Նոր Ռոսդամու հըրս (կիրք) կոտրաւ:

Ասաց. Պապօ, էսա վթը գլոխն ի:

Ասաց՝ պապօ խէր. էսա Կարամանի-Կաթէլի գյլօխն ի: Նոր
Զալէ Զեռին էլաւ ուր էլ աշիրաթ (ցեղ) հըմէն կանչեց, նոր իպէ
Ռոսդամ պսակեց:

Գէժանկն էլ պսակեց, քեառսուն օր, քեառսուն գիշեր խառ-
սնիս արաց:

Խնոնյք խասան ինոնց սրտի մուրազին, տիւք էլ խասնէք
ձեր սրտի մուրազին:

Էրկնուց իրեյք խատ խնձոր իջաւ, մէկը ասօղին, մէկը լսօ-
ղին, մէկը ականջ արօղին:

